ՄԱԿԴԻՐԸ ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Մակդիրը լեզվի պատկերավորման միջոց է, այլաբերության տեսակ, ոճական այնպիսի հնարանք, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ միայն հիմնական ու բնորոշ, տրամաբանական տարբերակիչ հատկանիշը, այլև նրա գեղարվեստական և գեղագիտական բնութագրությունը[1]: Մակդիրի մասին, որպես խոսքի պատկերավորման միջոցի, խոսվում է դեռ անտիկ աշխարհի արվեստի տեսությանը վերաբերող աշխատություններում[2]: Խոսքը հատկապես վերաբերում է մակդիրներին, որոնցով գրողն արտահայտում է իր վերաբերմունքը նկարագրվող դեպքերի և երևույթների վերաբերյալ: Մակդիրի ամենատարածված ըմբռնումն այն է, ըստ որի այն գոյականի վրա դրվող բառ է կամ բառակապակցություն, որ գեղարվեստորեն, պատկերավոր կերպով բնութագրում է տվյալ գոյականի ցույց տված առարկան, երևույթը: Այդ իսկ պատճառով մակդիրը շատ հաճախ կոչում են «գեղարվեստական որոշիչ»: Այս անվանումից երևում է, որ քերականական իմաստով մակդիրը դիտվում է որպես որոշիչ, բայց դրանք նույնացնել չի կարելի, քանի որ եթե լայն առումով բոլոր մակդիրները որոշիչ են, ապա բոլոր որոշիչները մակդիր չեն: Այս մասին Լ. Տիմոֆեևը գրում է. «մակդիրը գեղարվեստական պատկերավոր բնորոշում է, մինչդեռ սովորական որոշիչը գեղարվեստական այդ դերը չունի»[3]:

Ա. Ավագյանի արձակի լեզուն աչքի է ընկնում մակդիրների ամենաբազմազան ձևերի հմուտ և ճաշակով գործածությամբ: Գունեղ և դիպուկ մակդիրների միջոցով հեղինակը ստեղծում է առարկաների և երևույթների ամբողջական և տեսանելի պատկերներ: Ելնելով բնագրային հանգամանքներից, նա կարևորում է այս կամ այն հատկանիշը, որը նրա ընկալումով դառնում է առաջնային և այդպիսով թարմություն և իմաստային խորություն է հաղորդում խոսքին: Օրինակ՝ «Ծափերի տարափի պես ուրախ, կանաչ անձրևը շրխկոցով փշրվում էր փողոցի սալաքարերին» (ՇՅ,12), «Զարմանալի ծայն էր դա, թվում էր, թե հենց այդպես կխոսեր տափաստանի քարե լռությունը, եթե լեզու

[1] Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 334:
[2] Արիստոտել, Պոետիկա, Ե., 1955, էջ 200:
[3] Л. Тимофеев, Основы теории литературы, М., 1976, с.217.

ունենար» (Պ, 174): Նման մակդիրներն, որպես խոսքի պատկերավորման միջոց, ունեն անհատական բնույթ, և գրողի կամ բանաստեղծի ոճը բնութագրող, նրա խոսքի բնորոշ կողմերից է: Ա. Ավագյանի արձակի լեզվում ևս մակդիրները մեծ մասամբ արտահայտվում են ածականներով, ընդ որում ինչպես որակական, այնպես էլ հարաբերական ածականներով:

Ա. Ավագյանի արձակի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ ավելի հաճախադեպ են որակական ածականներով արտահայտված մակդիրները, ինչպիսին են՝ **սև** անձրև, **սև** օր, **սև** շուկա, **ծեր** այգի, **խենթ** Հրազդան, **ծույլ** արև, **ուրախ** ամպրոպ, **դառը** հիշողություն, **ուրախ** սառնամանիք, **ճապաղ** անդորր, **ժլատ** փաթիլ, **չար** լեզու, **ծեր** լորենի, **չարաճճի** անձրև, **ծույլ խշշոց**, **խորամանկ** քամի, **ծույլ** ցոլք, **ուրախ** բոց, **ծիծաղկոտ** արև, **տխուր** բեկոր, **քաղցր** հիշողություն, **ուրախ** շառաչ, **նենգ** ժպիտ, **մռայլ** երեկո և այլն:

Պատկերավորման տեսանկյունից ավելի ուժեղ երանգավորում ունեն հարաբերական ածականներով արտահայտված մակդիրները, ինչպես՝ **կախարդական** այգի, **կապարե** լռություն, **արծաթյա** աստղ, **փայտյա** մարդ, **քարե** լռություն, **կախարդական** աշուն, **ոչխարային** աչք, **երկաթյա** ջղեր, **թռչնային** ծնոտ, **երկաթյա** կամք, **անապատային** լռություն, **քարե** կարկուտ, **կրակե** խուրձ, **բյուրեղյա** արցունք, **արծաթյա** լույս, **գազանային** հայացք, **գեհենական** հրդեհ և այլն: Օրինակ՝ «Թորշոմած դեմքի վրա տարօրինակորեն փայլում են նրա կապույտ, մանր աչքերը, շրթները սեղմ են, **թռչնային** ծնոտը ցից» (Պ, 12), «Երբ նրանք բարձրացան, լուսինն արդեն դուրս էր եկել լեռների հետևից և խաղաղ ծովի վրա ցրել իր **արծաթյա** թեփը» (Պ, 63), «Միջօրեներին երկնքից կարծես **կրակե** խուրձեր են թափվում քաղաքի վրա, բայց երեկոները, երբ քամի է բարձրանում, ես բնազդաբար զգում եմ մոտեցող **ոսկե** աշնան բուրմունքը, որը սարերից է գալիս» (Պ,191), «Այդ բոլորը Նազան տատիկի համար խտացվել է կարճ պատերով ու ավելուկի թփերով շրջափակված այս կանաչ, **կախարդական** այգում» (Պ, 66), «Քաղաքում, ինչպես մոտակա դաշտում **անապատային** լռություն է տիրում» (Պ, 66), «Ներս մտավ ու լիաթոք շնչեց խոտերի **հրիկնային բույրը**» (Պ, 25) և այլն:

Մակդիրների միջոցով Ավագյանը ներկայացնում է իր հերոսներին, տալիս նրանց ներքին և արտաքին նկարագիրը, ստեղծում նրանցից յուրաքանչյուրի համապատասխան դիմանկարը, բացահայտում այդ հերոսների հոգեվիճակը: Օրինակ՝ «Մայրիկիս աչքերում փայլում էին **բյուրեղյա** արցունքներ և դեմքին փռված ժպիտն այլևս չէր **փախչում**» (ԿՀ, 60), «Չէ, պետք է սթափվել, այս **փայտյա** մարդը հիմարություններ է դուրս տալիս» (ՇՀ, 79), «Բարեղամ Սուքիասյանը գեր մարդ էր, մեծ քթով, կախ ընկած **տխուր** բեղերով,

երբ ծիծաղում էր՝ սպիտակ, չարդուկած գոգնոցի տակ ցնցվում էր նրա փորը» (ՎՀ, 535), «Նրանց ամուսնական կյանքի մեջ պիտի հավիտյան մի **սև, դառը** բիծ մնար» (Վ, 17) և այլն:

Ավագյանի գործածած մակդիրները ավելի դիպուկ են առանձին կերպարների հոգեվիճակը նկարագրելիս: Այսպես, «Նազելի Դալարյան» վեպի գլխավոր հերոսուհին, որը երեսուն տարի «աննպատակ թրև է եկել» և կյանքում ոչնչի չի հասել արտահայտում է իր ներքին զայրույթը հետևյալ ձևով. «Գիշերազգեստը հագին Նազելին հիմա **բոցավառվող** աչքերով կանգնել էր քրոջ մոտ և նրա գլխին էր թափում իր **շիկացած** խոսքերի տարափը» (ՆԴ, 7): «Այնուհետև Աննային տանջում էր այն միտքը, թե չլինի՞ հանկարծ մի որևէ հրաշքով Նազելին զգացած լինի մոր կասկածը, պատահմամբ ինչ – որ **թթու** հայացք կամ անբարյացակամ վերաբերմունք նկատած լինի և կամ խոսքերի արանքից փրցրած լինի որևէ **կծու** ակնարկ» (ՆԴ, 106): Բերված օրինակներում ընդգծված մակդիրները **պատկերավոր** են դարձնում հերոսների խոսքը և միաժամանակ ընդգծում **գլխավոր** հերոսուհու հոգեվիճակը և նրա նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Հաճախ մակդիրների ընտրությամբ և գործածությամբ արտահայտվում են հերոսների ընկալումներն ու պատկերացումները բնության, կյանքի, երևույթների և իրականության նկատմամբ, որոնցում դրսևորվում է նրանց համապատասխան վերաբերմունքը այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ՝ ելնելով տվյալ իրադրությունից: Օրինակ՝ «Ինչպիսի զոհաբերություններով, դառնություններով, զրկանքների գնով ձեռք բերած քո փոքրիկ- փոքրիկ երջանկությունը ճաշակելու հենց նախօրյակին, ինչ- որ մի **տխուր** շոշյուն, որը միայն **մեռնող** կաղնին կարող է լսել, քեզ ասում է՝ ժամանակն է...» (Պ, 65), «Կործանիչի նախկին օդաչուն այս խարխլած տնից ու **ծեր** այգուց միայն **դառը** հիշողություններ ունի» (Պ, 52) և այլն: Նման մակդիրների միջոցով հեղինակը պատկերավոր ձևով բնութագրում է կերպարների ներաշխարհն ու հուզական ապրումները:

Ավագյանի արձակի լեզվում ոճական յուրահատուկ երանգավորում ունեն գունային մակդիրները, «որոնք նախ և առաջ պայմանավորված են հեղինակի անհատականությամբ, նրա բանաստեղծական խառնվածքով, իսկ հաճախ նաև՝ գրական - ստեղծագործական ուղղությամբ»[4]: Օրինակ՝ **կանաչ** անձրև, **կանաչ** աղմուկ, **գորշակապույտ** հորիզոն, **դեղին** տխրություն, **խարտյաշ** աշուն, **ոսկե** աշուն, **դեղնաչյա** առավոտ, **կապարագույն** լեռ, սև վիշտ,

---

[4] Լ. **Եզեկյան, նշվ., աշխ., Ե., 2003, էջ 338**:

գորշ - արնագույն ցոլք, արնագույն բեղ, **դեղին** աչք, վարդագույն ծփանք և այլն: Բնագրային օրինակներ. «...նրան դուր չի գալիս գորշակապույտ հորիզոնի թախիծը կամ խարխուլ մեչեդը, որի վրա կարծես թուխս է նստել մի **դեղին** տխրություն» (Վ, 62), «Աշնան մի գունատ, **դեղնաչյա** առավոտ ուսանողը գլխակորույս սենյակ նետվելով գոչեց...» (Պ, 81), «Խմբագրական կոլեգիան պահանջում է այդ բոլորը և **խարտյաշ աշնան** թախիծն ու լքված սերը, զամբյուղը...» (Պ, 90) և այլն:

Ա. Ավագյանը ոչ միայն կարողանում է ընտրել այնպիսի մակդիրներ, որոնք բնութագրում են առարկան կամ երևույթը, այլև մակդիրներ, որոնք լավագույն ձևով արտացոլում են հեղինակի հույզերն ու ապրումները: Այդպիսիք շատ են հանդիպում հատկապես «Շիկացած հող» -ը վեպում, որտեղ հեղինակը «շեկ» բառով կազմում է հետևյալ մակդիրները. **շիկացած** հող, **շիկակարմիր** առավոտ, **շիկացած** գլուխ, **շիկակարմիր** արև, **շիկացած** խոսք և այլ կապակցություններում, որտեղ այն ոչ միայն գունային երանգ է արտահայտում՝ կարմիրին տվող, դեղնավուն, այլև ունի «տաք», «շիկացած», վառվռուն» իմաստ. այսպես՝ «...պահեստապետի ականջին հասան պարետի **շիկացած** խոսքերը...» (ՇՀ,184), «Հուլիսյան **շիկակարմիր** արևը նոր է բարձրացել կապարագույն լեռների ետևից, բայց ահա, զգացվում է մոտեցող միջօրեի գոլ **խորշակը**» (Պ, 66), «... նրանց զգզգված մազերը թվում է, որ բռնկվում են, և որ ահա, նրանք կցատկեն խելակորույս, **շիկացած գլուխներով** կնետվեն դեպի անտառ, որ...» (Պ, 12) և այլն:

Մակդիրներն իմաստի ու գործածության տեսակետից կարող են ունենալ նկարագրական և հուզական արժեք: Նկարագրական մակդիրներն արտահայտում են երևույթների, առարկաների, գործողությունների արտաքին հատկանիշների նկարագիր, իսկ հուզական մակդիրներն զգացմունք են արտահայտում և ազդում են ընթերցողի, լսողի ներաշխարհի, զգացմունքների վրա: Մակդիրների այս երկու ձևերն էլ Ավագյանի արձակում գործածվում են: Օրինակ՝ «Հյուսիսից փչեց առաջին սառնաշունչ քամին և կարծես տեղ բաց անելով ձյունի համար այգիներից ու ճանապարհներից սրբեց տարավ **մեռած** տերևները» (Պ, 24), «Գարնան **չարաճճի** անձրևն արդեն դադարել էր» (Պ, 47), «Պարզկա գիշերներին փչում էր **սուր, ծակող** քամի» (Պ, 32), «Կանգնում ու նայում էինք պտտվող չարխին, դանակներից, մկրատներից **արծաթյա** աստղեր էին թռչում» (ՀՏ, 459), «Քաղաքի պատերը ծածկվեցին թռուցիկներով ու **կրակոտ** լոզունգներով և գնդապետ...» (Պ, 104), «Խոնվել էին իրար բզեզները, գետի **ծույլ** խշշոցը, տապից հոգնած թռչունների մնչունը և գոլ բուրմունքը...» (Պ, 5), «Կարծես հեռո՛ւ մշուշում նա տեսնում է վերի Լառը, խրճիթների երդիկ-

ներին մարմրող արևի **ծուլլ** ցոլքերը» (Պ, 82), «Թողել եմ բոլոր գործերս և եկել եմ տեսնելու ձեր **կախարդական** աշունն ու ձեր կտավները» (Պ,16) և այլն Նկատելի է, որ Ավագյանը կարողանում է ընտրել այնպիսի մակդիրներ, որոնք աչքի են ընկնում իրենց պատկերավորությամբ, դիպուկ են ու արտահայտիչ:

Ա. Ավագյանի արձակի լեզվում հանդիպում ենք բազմաթիվ մակդիրների, որոնք բնորոշ են միայն հեղինակին: Մակդիրների մեջ քիչ չեն նաև հեղինակային նորակազմությունները. ինչպես՝ **դեղին** տխրություն, **մեղրածոր** արև, **դեղնածոր** արև, **տխուր** բեկոր, **ծորուն** ձայն, **երազուն** աչքեր, **խարտյաշ** աշուն, **վարդափրփուր** հորիզոն, **թավշաբաշ** այգեստան, պուրակ, դեղնաչյա առավոտ, **հեզօրոր** երազանք, **ամպակատար** Մասիս, **շիկակարմիր** արև, **բռնազբոս** ժպիտ և այլն: Օրինակ՝ «Թեհրանի աշնանավերջը մի կարճ ամառ է հիշեցնում. **ծուլլ, մեղրածոր** արևն այդքան շուտ տեղի չի տալիս» (Վ, 65), «**Թավշաբաշ** այգեստաններով ու պուրակներով, կանաչալանջ բլրակներով երևանը այնքան մեղմ ու հիասքանչ էր փոթորկից հետո» (Պ, 86), «Աշնան մի գունատ, **դեղնաչյա** առավոտ ուսանողը գլխակորույս սենյակ նետվելով գոչեց...» (Պ, 81), «Հյուրերը դանդաղ, ոտների ծայրերով քաշվում էին սենյակ՝ թողնելով կնոջն իր **հեզօրոր** երազանքներով» (Պ, 80), «**Դեղնածոր** արևը քաշվում է սենյակի պատի գոգից» (Պ, 27), «Մայրամուտի **արյունոտ** ցոլքն արտացոլվել էր գետի ջրերում» (ՇՀ, 389), «Գարունը Երևան էր մտել կարծես միանգամից, մտել էր իր **ծիծաղկոտ** արևով, ամպրոպներով, բողբոջների առատ պայթյուններով» (Պ, 43) և այլն: Մակդիրների այսպիսի դիպուկ և տեղին օգտագործումը Ավագյանի արձակի լեզվի ոճական առանձնահատկություններից է:

Ավագյանի վեպերում և պատմվածքներում հանդիպում ենք նաև նախադասությունով և վերջադասությունով կազմված մակդիրների, ինչպես՝ **հեգնոտ** հայացք, **քնկոտ** այգաբաց, **անհամ** խոսք, **մուժոտ** երևակայություն, **կրակոտ** աչքեր, **օրորուն** ձայն, **յուղալի** եկամուտ, **անզոր** ամպ, **կրակոտ** լոգունգ, **ծիծաղկոտ** արև, **արյունոտ** ցոլք, **երազուն** աչքեր և այլն: Բնագրային օրինակներ. «Երևի մի փոքրիկ, **անզոր** ամպից կարճ անձրև եկավ և լուսաբացի հավաքարարների բարձրացրած փոշին կոտրեց» (Պ, 130), «Հայրիկի ու հորաքրոջ այդ հոգատարությունները, մխիթարական **անհամ** խոսքերը ավելի դաժան էին երեխայի համար, քան...» (Պ, 23), «Կալանավորը մի **հեգնոտ** հայացք է սահեցնում նրանց երեքի վրայով և քրթմնջում....» (Պ, 59), «...անտանելի են օփիում ծծող, կիսամերկ, արևակեզ եղած մարդիկ, մեչիդը, մոլլան, որ ամեն օր աղջամուղջին **քնկոտ** այգաբացն է օրհներգում, ծորուն, **տհաճ** ձայնով» (Պ, 60), «Այդ հանրատնից **յուղալի** եկամուտ ունի ինքը՝ ժանդարմական վաշտի փոխգնդապետը, որից բաժին է տալիս ճամբարի պարետին» (Վ,157) և այլն: Ավագյանի արձակի

լեզվում մակդիրները արտահայտվում են նաև որոշ դերբայներով: Հաճախակի են գործածված հարակատար և ենթակայական դերբայներով արտահայտված մակդիրները: Օրինակ՝ «Հյուսիսից փչեց առաջին սառնաշունչ քամին և կարծես տեղ բացելով ծյունի համար՝ այգիներից ու ճանապարհներից սրբեց տարավ **մեռած** տերևները» (Պ, 24), «Կամերայի դիմացի պառավ հացին ինչ-որ ծանոթ ու **փաղաքշող** բուրմունք է արձակում և Պերճի...» (Վ, 136), «Գիշերազգեստը հագին Նազելին հիմա **բոցավառվող** աչքերով կանգնել էր քրոջ մոտ և նրա գլխին էր թափում իր **շիկացած** խոսքերի տարափը» (ՆԴ, 7), «Խոր աշնան քամին անցավ ծառերի միջով, **ուշացած տերևները**...» (ՆԴ, 27) և այլն:

Այսպիսով՝ Ա. Ավագյանի արձակի լեզվի պատկերավորման հիմնական միջոցներից մեկը մակդիրն է, որի հմուտ և նպատակային ընտրությամբ և գործածությամբ հեղինակը ստեղծել է նկարագրվող երևույթների, առարկաների և անձանց ճշմարտացի պատկերը՝ հասնելով խոսքի պատկերավորության և արտահայտչականության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արիստոտել, Պոետիկա, Ե., 1955:
Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003:
Л. Тимофеев, Основы теория литературы, М., 1976:
Աբիգ Ավագյան, Պատմվածքներ, Ե., 1950, Վաղը, Ե., 1951, Շիկացած հող, Ե., 1955, Պատմվածքներ, Ե., 1958, Նազելի Դալարյան, Ե., 1959, Պատմվածքներ, Ե., 1962, Պատմվածքներ, Ե., 1963, Պատմվածքներ, Ե., 1965, Պատմվածքներ, Ե., 1973, Վերջին հանգրվան, Ե., 1982:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ – Վաղը, Ե., 1951:
ՇՀ - Շիկացած հող, Ե., 1955:
ՆԴ - Նազելի Դալարյան, Ե., 1959:
ՎՀ – Վերջին հանգրվան, Ե., 1982:
Պ – Պատմվածքներ, Ե., 1950, 1958, 1962, 1963, 1965, 1973:

THE EPITHET IN ABIG AVAGYAN'S PROSE

Thus, one of the main way of A. Avagyan's prose language picturesqueness is epithet, through skilful and purposeful choice and use of which, the author has created the truthful image of described phenomena, subjects and persons, reaching picteresqueness and expressiveness of speech.